ձակութեան ելանելոյ յինքն ընտանեօք և ամենայն ընչիւք առ այլ դաւառ և կամ տարը յաշխարհ, բայց ժամանակի պատերազմի մի ելցէ և տարցէ ինչս իւր 'ի յաշխարհն թշնամեաց հայոց, եթէ ոչ ըստ Օրինօք։

ԳԼՈՒԽ ՅԿԹ.

Ամենայն առաջադրութիւնք 'ի միջի ամենայն բնակողաց հայոց 'ի վերայ զոր ինչ և իցէ գործոց, հարկաւոր է ձեռնադրել թուղթ ուխտի և դաշնոյ, և 'ի նմայ յիշատակել տուգանքն ուխտազանց և դաշնաբեկ արանց տոկոս ըստ արժանւոյ գործին, որ եթէ գուցէ ով ոք գտցի ուխտազանց նա ինքն իւրն դատապարտեալ հատուցանելոյ տոկոս ուխտազանցութեան իւրոյ։

ԳԼՈՒԽ ՅԿ.

'Ի մէջն յաշխարհին հայաստանեաց բնակողաց, որ ոք այլ յազգ անօրէն եթէ հեթանոս, եթէ մահմետական, եթէ եբրայեցի և այլն ունին արձակութիւն ամենայն կերպ սովորական և վաղընջոց ծէս իւրեանց պահել, և 'ի միջի իւրեանց որ ոք տարաձայնութիւն եթէ ելցէ հարկաւորէ ըստ սովորութեան իւրեանց 'ի միջի իւրեանց ինքեանք ընտրել դատաւոր և ձեռնադրել թուղթ տոկոսի, զի հնազանդեսցեն հրամանի դատաւորաց իւրեանց (բայց 'ի մահ) և որ այսպէս ոչ